

Ճշդում

Հայր Օգոստինոս Վարդապետ Մեքուլեան
Վիեննական Մխիթարեան Վարժարանի
Տնօրէնը եղած է 1959-1968, ոչ թէ փոխ-տնօրէն:

ՀՐԱԺԵՇՏԻ ԽՕՍՔ
ՀԱՅՐ ՕԳՈՍՏԻՆՈՍ Վ. ՄԵՔՈՒԼԵԱՆԻ ՄԵԿՆՈՒՄԻՆ
ԱՌԻԹՈՎ
Կիրակի, 9 Յունիս 1968

Մեծայարգ Տնօրէն
Հայր Օգոստինոս Վ. Մեքուլեան,

Խօսք կ'առնեն մեծ ու փոքր ընկերներու անունով: Այս ներկայ պահը մեզ համար խորապէս յուզիչ է քանի կը բաժնուինք շատ թանկագին անձէ մը:

Դուք եղաք առաջին աշխատաւորը այս ներկայ վարժարանին: Տասը տարի անդադար եղաք բարի օրինակ աշխատութեան նուիրումի ու կարգապահութեան: Ինչ անհուն զոհողութիւններ ըրիք միշտ բարձր պահելով մեր Վարժարանը:

Ձեր կեանքն ու գործունէութիւնը ամբողջ նուիրուած էին այս դպրոցի վերելքին: Դուք եղաք առաջնորդը մեր „Ուսանողական Խորհուրդ“-ին ու „Վերելք“ ուսանողական Պարբերագրքին:

Դուք, հիմնելով „Ուսանողական Խորհուրդ“ ը, աշակերներուն մէջ արթնցուցիք սէրը դէպի գրական շարժում:

Ներշնչեցիք սէրը դէպի Ազգ եւ Հայրենիք:

Ձեր աշխատութենէ զատ Ձեր մէջ նշմարեցինք Աստուծոյ մարդը, ճշմարիտ կրօնաւորը, հարազատ Մխիթարեանը, որուն բնաբանն է միշտ Աստուած եւ Հայրենիք:

Ձեր օրինակելի կեանքը մեզ համար խօսուն քարոզ մըն էր ընթանալու քրիստոնէական կեանքի շաւիղէն ուրկէ կեանքը կը ստանայ իր իրական արժէքը:

Տուիք Ձեր սիրտը, Ձեր միտքը, Ձեր կեանքը սպառելով մոմի մը պէս եւ եղաք մեզի համար ճշմարիտ օրինակը ջանասիրութեան, անդուլ աշխատանքի եւ առաքինութեան:

Երախտագէտ ենք այս բոլորին համար: Ձեր անունը, Ձեր օրինակը, Ձեր դէմքը, պիտի շողայ միշտ մեր մտքին ու աչքերուն առջեւ եւ կեանքի վերիվայրումներուն մէջ պիտի յիշենք ձեր բարի խրատները եւ բարի օրինակը՝ հետեւելու համար անոնց եւ չշեղելու առաքինութեան ճամբէն:

Գիտենք, սիրելի հայր, որ շատ անգամ չհամապատասխենիցք ձեր իղծերուն, մեր աշխատանքը ունեցաւ թերութիւններ: Կարգապահութեան մէջ թերեւս ունեցանք խոցելի կողմեր՝ վշտացուցինք Ձեր սիրտը թէեւ դուք միշտ բարի, միայն ժպիտով մեզ կը յարուցանէիք: Ներում կը խնդրենք Ձեզմէ մեր թերացումներուն համար: Փոխարէն կը խնդրենք Ձեր աղօթքները որպէսզի կեանքի վերիվայրումներու մէջ անշեղ ընդանանք այն ճամբէն որ մեզ կը հասցնէ բարոյական բարձունքները:

Շնորհակալ ենք

Երթաք բարեալ

Գրիգոր Հալլաճեան